


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

**ՆԿԵՂՆՅԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, ԳՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ
ԹԻՒ ՔՐԻՍՏՈՍԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ**

Քրիստոնէութիւնը տեւականօրէն բազմազան փոփոխութիւններու ենթարկուած է. անոր կազմակերպութիւնները, վարդապետութիւնները, կեանքը եւ արտայայտութեան ձեւերը պատմութեան տարբեր շրջաններուն մէջ տարբեր կերպարանքներով յայտնուած է: Քրիստոնէական հոգեւոր արժէքներու ցուցակը հաստատ հանգամանք մը չէ ցուցուցած երբեք: Այս խնդիրը կուզենք ներկայացնել մեր խորագրին թելադրած ուղղութեամբ:

Մինչեւ Գ. Դարու վերջը Քրիստոնէութեան մէջ Քրիստոսի անձնաւորութիւնը տիրող ոյժն էր: Քրիստոնէական կեանքը իր ներշնչումները, իր պատգամները ուղղակի Անկէ կ'ստանար. հոգեւոր կեանքի եւ անոր բազմազան խնդիրներուն համար Քրիստոս էր բացարձակ հեղինակութիւնը: Քրիստոնէութիւնը Քրիստոսի հետ կենակցութիւն էր, ամեն ինչ Անոր անունով, Անոր հետ եւ Անոր համար կը կատարուէր:

Բայց երբ Քրիստոնէութիւնը պիտական կրօնք դարձաւ, Գ. Դարուն սկիզբը Մեծն Կոստանդիանոսի ատեն, կամայ կամայ եկեղեցին եւ անոր պաշտօնէութիւնը սկսան զբաւել այն զիրքը զոր Քրիստոս առաջ ունէր

Քրիստոնէական կեանքի մէջ: Հոգեւոր կեանքի մէջ, ինչպէս նաեւ կեանքի բոլոր միւս մարգերուն մէջ, միահեծան իշխողը եղաւ Եկեղեցին: Մարդիկ պէտք էին ապրիլ, խորհիլ եւ զգալ այնպէս ինչպէս որ կ'ուզէր եկեղեցական իշխանութիւնը: Հոգեւոր արժէքները պիտի գնահատուէին, եկեղեցիի որոշած չափանիշովը: Հետեւաբար կեանքը դարձաւ մեքենական եւ կենսունակութենէ զուրկ: Քրիստոնէական պատմութեան քննադատը շարունակ էր այս, երբ մարդիկ եկեղեցապաշտ էին քան թէ Քրիստոսապաշտ:

Նկաւ ԺԶ. Դարուն կրօնական բարեկարգութիւնը, որ սոսկալի հարուած մը տուաւ եկեղեցապաշտութեան՝ Ս. Գրքին տալով բացարձակ հեղինակութիւն, կրօնական արժէքները գնահատելու եւ հոգեւոր կեանքը ապրիլու համար: Այս մեծ յեղափոխութիւն մ'էր, որ նոր ուղղութիւն մը տուաւ կեանքին: Փոշոտած, մոռացութեան դատապարտուած «Գիրքը» խլելով Նիկեոյիէն բացարձակ հեղինակութիւնը մեծ ազդակ մ'եղաւ կեանքը ձեւելու մէջ: Ասոր ազդեցութիւնը շատ բարեբար եղած է, արտադրելով աւելի կենսունակ եւ ջերմեւանդ հոգեւորականութիւն մը: Բայց երեսան եկաւ նոր վտանգ մը հոգեւորական կեանքին սպառնացող, — տառապաշտութիւն: Ս. Գիրքը եղաւ տեսակ մը կուռք, անոր իւրաքանչիւր բառին մէջ որոնեցին ատուածային պատգամներ, որոնք յաճախ հա-

կարբիստոնէական էին: Փոխանակ կենդանի Քրիստոսի մարդիկ գիմեցին գիրերու՝ ըստանալու համար հոգեւոր ներշնչումներ եւ նոր պատգամներ իրենց առօրեայ կեանքին համար:

Ներկայիս մեր կրօնական կեանքին մէջ հոգեւոր կեանքին սպառնացող վտանգ մըն է այս: Սակայն պէտք է ընդունիլ անվերապահօրէն թէ Ս. Գրքը գնելու է իր կարեւոր և վայել գիրքին մէջ, առօրեայ ուսումնասիրութեան առարկայ ընելով զայն: Բայց մեր այս ջանքին մէջ պէտք է անտեսել Քրիստոսը, որ աղբիւրն է բոլոր ներշնչումի եւ ճշմարտութեան, պէտք է խորհիլ թէ առանց Քրիստոսի ոգին ունենալու Ս. Գրքը հասկնալ կարելի չէ:

Պէտք է ընդունիլ թէ հոգեւոր կեանքի մէջ բացարձակ իշխանութիւնը ո՛չ եկեղեցիին կը պատկանի եւ ո՛չ ալ Ս. Գրքին, այլ Քրիստոսին, որ ո՛չ թէ միայն երկրին վրայ գտնուած ատեն ապրածներէն զատ, սուրբացուցած է, այլ մինչև հիմա եւ ասկէ վերջ յաւիտեանս եղած է եւ պիտի ըլլայ միակ ուսուցիչը, բարեկամը, բացարձակ հեղինակը մեզի համար:

Պէտք է Քրիստոսը դարձնենք մեր կեանքին առանցքը, պէտք է ըլլանք Քրիստոսապաշտ, ինչպէս որ էին առաքելական դարու Քրիստոնեաները, եթէ կ'ուզենք հոգեւոր ազատ թռիչքներ ունենալ բարձրանալու համար հոգեւոր կեանքի բարձրագոյն ոլորտներուն մէջ:

Տ. Ճ. Ս.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԴԵՂԱՐՈՒԵՍԸ

Դ.

Մենք տեսանք թէ ի՞նչպէս գեղարուեստը Յիսուսի անձնաւորութեան մէջ սա երկու տարրերը տեսականօրէն և հաստատօրէն պահած է, Անոր կերպարանքին գուարթ պարզութիւնը և Անոր խոր վիշտին ողբերգական վսեմութիւնը: Անբնական չէ այս. քանզի գեղարուեստը իր գլխաւոր սնունդը կը միտի գտնել կեանքի ողբերգութիւնը և գեղեցկութիւնը խոկալու մէջ:

Այս կը ծառայէ յուցնելու զրիթէ միակ այն ճամբան՝ որով բոլոր գէպի յառաջ նայող

մարդիկ Յիսուսի մէջ «նման հոգի» մը գտած են:

Այս միտումին ուրիշ և լաւագոյն օրինակը կրնայ գտնուիլ սա իրողութեան մէջ թէ Նազարէթի Հիւսնը Բարի Հոգիւնն էր կամ Տառապով Փրկիչին չափ ներշնչումի և քաջութեան հարուստ մէկ աղբիւրը եղած է: Ճան Պօլէ սկսեալ մինչև Ճան Պրատեն եղած չէ մեծ «Ապստամբ» մը՝ որ Յիսուսի մէջ իր արդարացումը փնտռած և գտած չըլլայ, և ամէն մարդ որ կարեկից զգացում մը տածած է «Ռոմիկ ժողովուրդին», մարդկային մեծ գանգուածին հանդէպ իր կարօտութիւններուն և կարեւորութիւններուն մէջ, Յիսուսի օրինակին և կեանքին մէջ ոյժ և քաջալիրութիւն գտած է:

Տր. Փիպատի զրի առած է Գերման բանւորներու կողմէ Յիսուսի մասին եղած կարգ մը արտայայտութիւնները: Անոնց մէջ մէկը ըսած է. «Քրիստոս գործաւորներուն ճշմարիտ մէկ բարեկամն էր, ոչ թէ միայն խօսքերուն մէջ այլ իր գործերուն մէջ ալ»: Տր. Էյլթ կարօտով կ'սպասէր այն օրուան իր Անգլիոյ գործաւորները այսպէս պիտի ըսէին. «Մենք կը կարծէինք թէ Քրիստոս քահանաներու կողմէ շինուած առասպել մըն է... բայց հիմա կը տեսնենք որ Ան վերջապէս մեզի պէս մարդ մէր, աղքատին կը կարեկցէր... հիմա այս կը հասկնանք որ Ան մեր մարդն է:» Այս պարզապէս նախապուշտկումն էր այն օրուան երբ իրաւի Լոնտոնի Հայտ փարքին մէջ գործաւորներու հաւաքոյթի մէջ երեք անգամ ծափահարեցին Յիսուս Քրիստոսը:

Այս գաղափարը նոր չէ: Երբ Ուիլիամ Քլայթ «Աղքատ քահանաները» Անգլիոյ գիւղացիներուն կը պատուաստէին ընկերային այն գաղափարները որ Գիւղացիներու Ապստամբութիւնը յառաջ բերաւ, երբ Ճան Պօլ՝ «Բենդի Գիւր քահանան» Քէնզի ժողովուրդը ժամանակին ընկերային ճնշումին դէմ կռուելու մղեց, Ուիլիամ Լանկլանտ այս ըմբոստութեան ոգին արտայայտեց իր «Փիրս Փլատուն» մեծ ոտանաւորին մէջ:

Լանկլանտէ այս կտորը աղքատ մարդուն Ողբերգականն է: Փիրս Փլատունն, քերթուածին հերոսը, յիշաւ ուրիշ մէկը չէ այլ Յիսուս Ինքը — «Ժողովուրդին մարդը, ուսման Քրիստոսը, սիրով պսակուած աղքատ մարդկութիւնը, զայրոյթով շինուած ծանր

աշխատող մարդկու թիւնը, ամենապէտ իմացականութեամբ օժտուած կարեկից մարդկութիւնը՝ որ ամենուն իր բաժինը կը բաշխէ, օր մը բարձր դասակարգէ տիկիները՝ դործի մղելով, ուրիշ ատեն մը խրոխտ կղերին վրայ յարձակելով, ուրիշ օր մը խնդրելով Սովէն որ իրեն օգնէ փողոցներու թափառաշրջիկ տրտնջացող թափթփուքներուն դէմ. բայց միշտ քանջալիւրելով ապաշխարող մեղաւորի, օգնելով տկարին, ցուցնելով մեծ ճամբորդութեան ուղին, այսպէս տարօրինակ դէմք մը, մարդկութեան մէջ Քրիստոս, քրիստոսացած մարդկութիւն, ո՛չ կատարելապէս աղքատ մը, ո՛չ ալ մշակ մը կամ Յիսուս մը, բայց թառամելով եւ անյայտանալով եւ ապա վերերեւելով Անոր մարդկայնացած աստուածութեան բոլոր ձեւերովը եւ վախճանելով իրր յաղթական Քրիստոսը որ խաչէն վար իջաւ եւ դժոգքի դռները ճեղքելով դուրս ժայթքեց արհամարհելով անոր բոլոր զէնքերը»:

Ե

Յիսուսի նոյնացումը մարդկութեան հետ միայն Ու. Լանկլատի չէ սահմանուած. ոչ ալ ճիշդով կատարուած քմայտկան մեկնութիւն մ'է ան. քանզի իսկական առումով այն կը բացատրէ ճիշդ այն զոր Յիսուս ինքը ըսել կ'ուզեր՝ երբ ինքզինքը Որդին Մարդոյ կոչեց, տիպար, սովորական մարդը, ներկայացուցիչը ո՛չ թէ մեղմէ մէկուն այլ մեր ամբողջին: Եթէ երբեք կը խորհինք թէ գաղափար մը ճշմարիտ է իբր անբնագոյնին կերպով իր արձագանքը կը գտնէ մարդուն հոգիին մէջ, ուրիմն ունէ մէկէ այս գաղափարէն աւելի կատարեալ ճշմարտութիւն մը չի կրնար ըլլալ: Ռուս մեծ գրող Թուրկենիս այս կէտը այսպէս կը նկարագրէ իր տեսիլքին մէջ:

«Ես ինքզինքս, զրեթէ պատանի մը, ցած եւ փայտաշէն եկեղեցիի մը մէջ տեսայ: Բարակ մոմերը կը նշուէին Սուրբերու հին պատկերներու առջեւ: Առջեւ չատ մարդիկ կային, բոլորն ալ գեղեցիկ մազերով շինական գլուխներ: Երբեմն անոնք կ'սկսէին ճօճիլ, իյնալ եւ նորէն կանգնիլ, ինչպէս որ ցորենի հասկերը կը ծածփան երբ ամառնալին հով մը անցնի անոնց վրայէն: Յանկարծ ետեւի կողմէն մէկը եկաւ եւ քովս կայնեցաւ: Ես անոր չնայեցայ, բայց զգացի թէ այդ մարդը Քրիստոս էր: Յուշում, հետո-

քրքրութիւն եւ երկիւղ տիրեցին իմ վրաս: Ջանք մ'ըրի եւ զրացիս նայեցայ: Դէմք մը որ ունէ մէկուն ունեցածին չէր նմանէր, դէմք մը որ բոլոր մարդերուն դէմքերուն պէս էր: Աչքերը ձգտումնաւոր եւ հանդարտ կերպով քիչ մը վերը կը նայէին, չրթունքը զոց էին, բայց ոչ սեղմ, վերի շուրթը կարծես թէ միւսին վրայ կը հանգչէր, երկուքի բաժնուած պզտիկ մօրուք մը. ձեռքերը ծալուած եւ հանդարտ, եւ հագուստները ունէ մէկուն հագածին պէս էին: «Ինչպիսի Քրիստոս մըն է այս խորհեցայ, այսպիսի հասարակ, սովորական մարդ մը կրնա՞յ ըլլալ Ան, երբեք»: Մէկ կողմ դարձայ, բայց հագիւ թէ աչքերս այս հասարակ մարդուն նայելէ դադրեցան՝ նորէն զգացի թէ ան իրապէս ուրիշ մէկը չէր այլ Քրիստոս ինքը որ իմ քովս կը կայնէր: Յանկարծ սիրտս ընկճեցաւ եւ ես ինքզինքիս եկայ: Միայն ա՛յն ատեն հասկեցայ թէ Քրիստոսի դէմքը ճիշդ այսպիսի դէմք մըն է, դէմք մը որ բոլոր մարդերու դէմքին պէս է»:

Անշուշտ պէտք է ճշմարժիտ ըլլայ այն գաղափարը թէ Յիսուս Քրիստոսի դէմքը մեր իրարու դէմքերուն վրայ տեսածէն տարբեր կերպով չենք կրնար տեսնիլ. կամ, ուրիշ բառերով, առանց յոտակ ընկերային ըմբռնում մը ունենալու չպիտի կրնանք «Այդ մէկ Դէմքին» բոլոր նշանակութիւնը երեւան հանել:

Զ.

Քրիստոնէական դարու մեծ գրողներէն քիչեր կան՝ որո՞ք իրենց գրութիւններուն մէջ ունէ գնահատում կամ ափնարկում մը ըրած չըլլան Յիսուսին մասին: Ջարմանայի է որ Շեյքսպիր այս բացառութիւններէն մէկն է:

Վիճելի հարց մըն է թէ արդեօք Շեյքսպիրը կաթոլիկ էր թէ Բողոքական, երկու կարծիքներն ալ փաստող կէտեր կրնան գտնուիլ. ինչ որ ալ ըլլայ այն նիւթին մասին անոր լուսութիւնը լուսարանութեան կը կարօտի: Ուսուցչապետ Սթըպս կը կարծէ որ ասոր պատճառը այս է, — Կ'երեւի թէ Մաքրակրօն Անգլիոյ պաշտօնական աստուածաբանութիւնը «հիմնուած է այնպիսի Քրիստոնէութեան մը վրայ, որմէ Քրիստոսին անձնաւորութիւնը կատարելապէս անհետացած ըլլալ կը թուի»:

Տ. Ճ. Խ.

(Շարունակելի)

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԱՊՐԻԼ

Ճշմարտութիւնն բաւը հոս իրականութիւնն նշանակութեամբ առնուած է, եւ ո՛չ իրը առնուած արանական գաղափար մը:

Ճշմարտասէր ըլլալու համար մարդ պէտք է խօսի և ընէ այն բանը՝ որ համոզուած է թէ իրականութիւնն է: Կրնայ ըլլալ որ մարդ ճշմարտութիւնը սխալ հասկնայ եւ կամ զայն ուղիղ ըմբռնելու համար շատ ժամանակի եւ աշխատանքի պէտք ունենայ:

Ասիկա թերութիւնն է, սակայն յանցանք չէ. մարդուն պարտականութիւնն է գիտցած ճշմարտութիւնը սիրել:

Այս նիւթին շուրջ շատ կարեւոր բան մը սա է՝ թէ պէտք է մենք հաւատանք եւ ընդունինք որ տիեզերքի մէջ ճշմարտութիւնը գոյութիւն ունի: Անգամ մը փաստափան բարեկամներէս մէկը մեծ հոռնոցով կը պընդէր՝ թէ տիեզերքի մէջ ճշմարտութիւնն ըստուած բան չկայ: Ճշմարտութիւնը յարաբերական է, մարդոց գաղափարէն, սովորութիւնէն եւ գիտութեան աստիճանէն կախում ունի: Այսօր մարդոց «ճշմարտութիւն» ըսածնէն կրնան վաղը նոր լոյսի տակ ճշմարտութիւն ըլլալէ գաղբիլ:

Ասիկա շատ անգամ կրնայ պատահիլ. սակայն ասկէ չի հետեւիր թէ աշխարհի մէջ ճշմարտութիւն գոյութիւն չ'ունի: Բարիին եւ չարին, լոյսին եւ խաւարին, ճշմարտութեան եւ սուտին իրարմէ տարբերութիւնը յաւիտենական է: Մարդը այդ պատուածային իրականութիւններու արտայայտութիւնն է: Բոլոր տիեզերքը ճշմարտութեան վրայ հիմնուած է: Մէկը ապրեցաւ երկրիս վրայ, որ աստուածային եւ տիեզերական ճշմարտութիւնը իւր անձին մէջ յայտնեց եւ կատարելագործեց:

Երբ մենք՝ մահկանացուներս Անոր հետեւինք ճշմարտութիւնը գտած կ'ըլլանք:

Մենք նոր ճշմարտութիւններ չպիտի ըստեղծենք, ճշմարտութիւնը կայ. անիկա ամէն տեղ, մարդկութեան մէջ յայտնուած է: Մարդը միայն պէտք է ճշմարտութիւնը սիրէ եւ փնտռէ եւ երբոր գտնէ՝ զանիկա ընդունի: Երբ մարդ առանց յայտնուած ճշմարտութեան հետեւելու ինքիւրմէ խօսի սուտ է: Յի-

սուս ինքը ըստէ, «Ի՞նչ որ հայրս բրաւ, նոյնը կ'ընեմ»: «Իմ խօսքերս իմա չեն, ինձ հետ եղող հօրս խօսքերն են»:

Ճարտարապետը ի՞նչ կ'ընէ. գիծեր, կոր գիծեր գործածելով հոյակապ շէնք մը կը կառուցանէ: Փարոս շինողը կաղնիէն օրինակ կ'առնէ: Նաւ շինողը ձուկին մարմինը եւ թեւերը քննելով իր նաւը կը շինէ: Օդանաւը հնարեցին արծիւին թեւերուն հետեւելով: Երկրագործը, գիւնաւագէտը՝ ի՞նչ կ'ընեն: Դարերու փորձառութեան եւ մարդկային կեանքի սկզբունքները քննելով գործ կը տեսնեն: Քրիստոս ինքը իր թագաւորութիւնը յաւիտենական իրաւունքներուն վրայ հիմնուած սկզբունքներով հաստատեց:

Մեր զիրքը ի՞նչ պէտք է ըլլայ ճշմարտութեան հանդէպ: Ի՞նչպէս կրնանք ճշմարտութեան թագաւորութեան քաղաքացիներ ըլլալ:

Առաջին. պէտք է ճշմարտութիւնը նկարագրին մէջն է: Ճշմարտութիւնը խօսիլ արժէք ունի երբ խօսողը ինքը ճշմարտ է: Ճշմարտութիւնը կեանք է:

Երկրորդ. պէտք է Կեանքի ստեղծողին ունենալ: Ասիկա կը նշանակէ թէ ճշմարտութիւնը պէտք է մեր ամբողջ էութեան մէջ թափանցած ըլլայ: Կաղնիին իր արմատին, բունին, ճիւղերուն, կեղեւին, պտուղին, տերեւներուն մէջ պէտք է միայն կաղնի ըլլայ և ոչ ուրիշ ծառ մը: Նմանապէս՝ Հայը պէտք է միշտ Հայ մնայ, ամեն տեղ Հայ երեւնայ. ուրիշ ազգութիւն կեղծելու չէ:

Երրորդ. ճշմարտութիւնը քննելու, գըտնելու եւ գայն պաշտպանելու մասին պէտք է անաջատ ըլլալ: Մեր անձնական կամ փորձիական շահերը պէտք չէ ճշմարտութեան հանդէպ մեր աչքերը կուրցնեն: Ազգ մը չի կրնար սուտով փրկուիլ, պաշտպանուիլ, պահուիլ: Դատ մը անարդարութեամբ չի կրնար շահուիլ կամ պաշտպանուիլ: Սուտը չի կրնար վերջնական յաջողութիւն գտնել: Մարդ պէտք է բարոյական քաջութիւնը ունենայ իր սխալած ըլլալը խոստովանելու: Ուրեմն ճշմարտ ըլլանք, ճշմարտը սիրենք, ճշմարտը յայտնենք, ճշմարտը ապրինք: Մարդկութեան եւ Աստուծոյ հանդէպ մեր ամենամեծ պարտականութիւնը այս է:

ՎԵՐ. Կ. Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԳՏՆՈՒՄԻԼԸ

Ատենօք Անգլիացի թագաւոր մը կար՝ որ գերի բռնուած էր և նետուած անծանօթ զնտանի մը մէջ: Ոչ ոք չէր իմացեր թէ ուր էր նա. բայց մտերիմ աշուղ մը մտադրեց զայն գտնել և զնայ բերդէ բերդ լեռնային անտառներու մէջէն՝ նուազելով ամէն մէկ զնտանի ձողերուն առջեւ հին մեղիկի մը որ իր թագաւորին ծանօթ էր: Վերջապէս ձանձրացած թագաւորը՝ որ կը նստէր անյոյս և յուսալքուած իր նկուղին մէջ՝ օր մը լսեց և՛ զանաւի մը, որ իր մէջ արթնցուց անցեալի յիշատակները և խորհուրդով տարաւ զայն ետ գէպի իր տունը: Կեանքը սկսաւ վերածրլիլ որ երկար ժամանակ յուսահատութեան քունին մէջ թաղուած էր: Ծեր թագաւորը պատասխանեց եղանակին՝ օրով զանուէցաւ ու վերահաստատուեցաւ իր գահին վրայ:

Այսպէս մեր խիղճերը կրնան քննաւիճակուած մութ զնտանի մը մէջ, չլքուած երկաթեայ դռներու և քարէ պատերու ետեւ, մինչդեռ իր գահը թափուէ: Բայց օր մը ձողերուն մէջէն թրթռուն ձայն մը կուգայ որ կ'արթնցնէ հոգիի թագաւորը, որ երկար ժամանակէ լվեր լուծ էր: Ատիկայ կրնայ ըլլալ երգի մը ձայնը, հին ծանօթ օրօր մը կամ ընտանեկան սաղմոս մը, զոր սրբակենցաղ մայր մը սովոր էր երգել մահկանանքին անրիժ և քաղցր օրերուն: Անիկայ կրնայ ըլլալ համար մը Աստուծոյ խօսքէն՝ որ երկինքէն կը ունայ նետի մը պէս: Անիկայ բարեկամի մը մահը, սոսկալի աղէտ մը կրնայ ըլլալ, ճիւղահոյտի մը ճնշումի պէս հոգիին վրայ իջնող: Անիկայ կրնայ ըլլալ համոզումի փայլատակող լոյսը՝ որուն ճառագայթը երեւան կը հանէ յաւիտենականութեան ահագնեայ միութիւնը, և կ'սթափեցնէ քնացող հոգին: Լաւ պիտի ըլլար իթէ այս զարթնումը պատահէր մահուան մութ ջրերուն այս կողմը, ուր գթութեան ձայնը կը կանչէ, ուր սիրոյ հրեշտակը գեւ կրնայ ետ առաջնորդել յանցաւորը ապաշխարութեան դռան մէջէն գէպի ներողութիւն և կեանք:

(Թարգմ.)

ՍԱՄՈՒԷԼ ՔԻՐԻԷՃԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ,

Միութեան վերջացող տարեկան ժողովին մէջ երեք եկեղեցիներ զիմուծ կատարած էին իրենց քարոզիչներուն ձեռնադրութեան համար: Այս անգամ Պէյրութ քաղաքի Հայ. Աւետ. Եկեղեցիի քարոզիչը, Պատ. Ն. Կէօք-կէօղեան, Մայիս 13ին, նոյն եկեղեցիին մէջ իր անտարանիչ ձեռնադրուած է: Կը յուսանք յաջորդ թիւով ձեռնադրութեան մասնաւոր մանկութիւնները զրել: Մեր սրտովին շնորհաւորումները:

Եկեղեցական ժողովը Մայիս 14ին մասնաւոր հաւաքոյթ մը սարքած է ի պատիւ ձեռնադրեալին, իսկ Մայիս 18ին Տոբթ. Վարդապետեան իր տան մէջ, թէյստեղան մը տուած է ի պատիւ ձեռնադրման արարի: 40 հոգի հրաւիրուած էին այս վերջին հաւաքոյթին, ուր աւուր պատշաճ ուղերձներ ըրած են Մր. Հ. Բիկզ, Պէյրութի Հայ. Առաքելական համայնքի առաջնորդը, և Վեր. Կ. Յ. Յարութիւնեան:

Կ'իմանանք թէ Զահէի քարոզիչին, Պատ. Յ. Շնորհօքեանի ձեռնադրութիւնն ևս պիտի կատարուի Զահէի մէջ, հաւանաբար երկու ամիս վերջը:

Ն. Ք. ԶԱՆԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱԺՈՂՈՎ ՀԱՆԷՊԻ ՄԷՋ

Ձանից Ընկերութիւններու համաժողովը Ապրիլ 14 և 15ին երկու մասնաւոր հաւաքոյթներ ունեցաւ, որոնցմէ առաջինին մասին գրուեցաւ նոր Աւետաբերի նախորդ թիւերուն մէջ:

Այս համաժողովին մասնակցեցան Հալէպէպի ութը Ձանից Ընկերութիւնները, կը յուսանք թէ կարելի պիտի ըլլայ տեսնել Սուրբուհ և Լիբանանի Հայ. Աւետ. եկեղեցիներուն բոլոր Ձանից Ընկերութիւններուն մէկ համաժողովը:

Իւրաքանչիւր ընկերութիւն զատ զատ իրենց մասնաւոր տեղը գրաւած էր սրահին մէջ. — Երկու եկեղեցիներու գեւատի աղջիկները, 9-12 տարեկան, բեմին ճիշդ զիմացը սրահին կեդրոնը գրաւած էին, սրահին ձախ կողմը երիտասարդուհիները և աջ կողմը երիտասարդները կը նստէին, իսկ սրահին

հաւելը կը տեսնուէին պատանիները եւ պատանուհիները: Աւետ. Եկեղեցիներու Միութեան անդամները կը գտնուէին բէմին աջ կողմը եւ անոր ձախ կողմը կը նստէին հրաւիրուած տիկիները: Պատ. Ա. Հատիտեան կը նախագահէր համաժողովին, որուն այս տարուան նշանաբանը, «Սուրբիոյ Երիտասարդութիւնը Քրիստոսի եւ Եկեղեցիի համար» կը կարգադրէր պատին վրայ: Օրուան խօսողն էր Մր. Է. Բիկզ, որ պարզ հայերէնով, բայց ազգեցիկ կերպով խօսեցաւ թէ մանուկները եւ պատանիները պէտք է օրինակ ըլլան խօսքի, ծառայութեան, հաւատքի եւ մաքրութեան մէջ: Պէյրութի Ե. Ք. Ջանից ընկերութեան կողմանէ խօսեցաւ Տօքթ. Բ. Հատիտեան:

Այս համաժողովը իր պարզութեանը եւ կանոնաւորութեանը մէջ գեղեցիկ, մեծապէս թիւադրիչ եւ կրթիչ ազդեցութիւն մը ունեցաւ բոլոր ներկաներուն վրայ:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԵԿԲԱՆԻԿԻՆ ՄԱՂԹԱՆԲԸ

Աստղիկ շատ տխուր էր այդ օր, հակառակ անոր որ գարնանային զով սրւք մը խինդ ու ծիծաղ կը սփռէր բնութեան ծոցը: Երկու օրէ ի վեր արդէն պատրաստութիւն կը տեսնուէր տան մէջ: Գիւղ պիտի երթային, ամբողջ ամառը հոն անցնելու: Զապէլ ճիշդ վիշտով տեսնէր ի վեր կը տառապէր անողոք հիւանդութեան մը ճիւղաններուն մէջ: Հազիւ երկու տարիով պզտիկ էր իր քրոջմէն՝ Աստղիկէն, բայց զանոնք տեսնողը զոյգ մը մանուշակներու չափ իրարու կը նմանցնէր եւ կը շփոթէր ըսելու թէ ո՞րը մէկալէն գեղեցիկ էր: Ջուխտ մը տատրակներ էին անոնք, մին ուրիշ եւ միւսը տասը զարուհներ ողջունած:

Հայրիկը, ազնիւ եւ հոգածո՛ւ ծնողքի մը շնորհքով օծուն՝ բարի հայրիկը, ամէն ինչ կը հասցնէր իրենց: Տակաւին թխպոտ ամալ մը անցած չէր անոնց չէնչող երգիքին վրայէն, երբ օր մը Զապէլ անկողին ինկաւ եւ հոն մընայ գտնուած, քանի մը անգամ ալ մահուան դռները երթեալիկէ վերջ: Տան բժիշկը՝ կարելի ամէն ճիւղ թափելէ յետոյ, յուսահատած գիտութեան ընձեռած ոյժերէն եւ յուսալով բնութեան միջոցով Աստուծոյ շնայլած բա-

րիքներուն մէջ գտնել սիրուն Զապէլին փրկելութիւնը, ըսաւ օր մը.—

—Տիկին Սաթիկիկ— Այս էր անոնց մօր անունը— ուրիշ յանձնարարութիւն մը չունիմ, չորս հինգ ամսուան օգափոխութիւն մը պէտք է Զապէլիդ համար: Արուեստը իր Ոչը ըսաւ այլեւս, բնութեան բուժարար եւ Աստուծոյ փրկարար ձեռքերուն կը յանձնեմ Զեղի, երթա՛ք բարով...: Մօր մը սիրտը կ'արիւնէր... եւ ի՞նչ կայ ահաւի՛ք ան մօր մը խոցոտուած սրտին կոտտանքը աղիխարշ...:

—Օրհնեալ ըլլայ Աստուծոյ կամքը... փափաց հէք մայրը, հեծկտուքէ խեղդուած ծայնով մը եւ որոշեցին երեք օր վերջն իսկ Պ...գիւղը երթալ: Աստղիկ ալ պիտի ընկերանար Զապէլին եւ իր մօր, օգնելու համար իր հիւժած փոքրիկ քրոջը: Շուտ անցան երեք օրեր, եւ ահա մէկնումի ժամուն անոնք համրոյրներ փոխանակեցին սիրեցեալ հայրիկին հետ ու ճամբայ ինկան, մերթ ախար, մերթ սրտապնդող զգացումներու տակ եւ հասան Պ... գիւղը: Իրենց վարձած տան ետին պզտիկ բլրակ մը կայ, քարքարուտ եւ անմատոյց ապառաժներով վերջաւորուած: Ամէն առտու Աստղիկ Զապէլին թեւէն բռնած, զրեթէ կէս մը շալկելով գայն, կը տանէր այդ բլրակին ստորոտը, արեւծաղին կենսատու գեփեւէն օգտուելու յոյսով, մինչեւ որ մայրիկը իրենց կաթը տաքցնէր, շաքարին հետ իր բլբլեղանման արցունքէն քանի մը շիթեր ալ խառնելով անոր մէջ:

Շարաքներ կ'անցնէին, Աստղիկին եւ Զապէլին սիրեցեալ հայրիկը յաճախակի նաւակներով կը համեմէր անոնց տաղտկալի եւ անհամ կեանքը: Կիրակի առտու մը Աստղիկ եւ Զապէլ կրկին բլրակին կողը նստած էին, երբ հեռուն ժայռերու մէջ զարդացող պզտիկ առարկայ մը Աստղիկին ուշադրութիւնը գրաւեց. հետաքրքրութիւնէ մղուած, ան ձգեց իր քոյրը շուքին մէջ եւ վազեց գէպի ժայռերը... Ի՞նչ տեսնէ... Թեւէն վերաւոր եկքանիկ մը, ժայռերու մէջ գետնազուած իր բունիկին մօտ, հաղիւ թէ քաշկրտելով կը հեւար հասնելու համար հոս հոն նետուած քանի մը կուտիկներու, որոնք անշուշտ մայր եկքանիկը թափած էր, իր վերաւոր ձագուկը փրկելու համար անոտուող մեռնէլէ: Աստղիկ փափկօրէն վեր տաւ պզտիկ վերաւորը եւ

տեսաւ անոր ուրած ու թարխոտած թեւիկը: Չորս անմեղ աչքեր իրարու յարեցան... ուրոնց վրայ Աստուած վերէն իր շնորհքն ու ժպիտը կը թափէր... Աստղիկ երկրորդ անգամ զգաց վիշտը... իր ամենէն մորմոքիչ ուժղնութեամբ...: Ափին մէջ կձկուող թռչնիկին հետ ծունկի ինկաւ... «Որքա՞ն կը տառապի արդեօք...» եղաւ իր ճիչը: Քիչ հետուն արդէն եկքանիկին ընտանիքը, հայր մայր և քոյր, շուարած ձեւերով թափ կուտային իրենց թեւերուն, ահաւոր վտանք մը նախատեսելով իրենց հէք վերաւորին:

Եղնիկի մը արագութեամբ ժայռերէն վար սուրաց Աստղիկ և տուն հասաւ, լուաց մաքրից և կաթիլ մը եօթ լուծաջուրով հալանիսեց վէրքը թռչնիկին, ինչպէս ըրած էր իր մայրը, երբ ձկնոյթ մատը փուշ մը մատմ էր երկու օր առաջ. կտոր մը հաց ծամեց և քընքշօրէն կապեց վէրքին վրայ, ինչպէս կարողացած էր պառաւ մամիկին հէքեաթին մէջ եւ երկար ու սրտարուխ մազթանքներով համրուրեց անոր աչքերը եւ վազեց իր բոյնին մէջ դնելու զայն, չմոռնալով մեծ ափ մը փշրանք եւ թիթեղէ թասով մըն ալ ջուր դնել անոր քով: Հէք թռչնիկին ծնողքն ու քուրիկը օդին մէջ կը դառնային տակաւին, ողորածայն օգնութիւն հայցելով քարէն ու ծառէն: Երջանիկ զգացում մը կը հոսէր Աստղիկի երակներուն մէջէն երբ ան եկաւ քրոջը քով, ներողութիւն խնդրեց իր ուշացումին համար և տուն հասնելով երկուքին ալ պատմեց բոլոր դէպքը, քանի որ մայրն ալ իմացած էր Աստղիկին տուն դարձը զբաղած ըլլալով խոհանոցին մէջ: Մայրը շոյեց և համրուրեց զինք, նմանութիւն մը տեսնելով իր եւ վերաւոր թռչնիկին մօր սիրտերուն և վիշտերուն միջև:

Ամէն օր կ'այցելէր Աստղիկ վերաւոր եկեքանիկին և ամէն երկու օրն անգամ մը նոյն խնամքով կը փոխէր անոր թեւիկին վէրքը: Եկքանիկինը այլևս վախի ճիչեր չէին արձակեր երբ մօտենար Աստղիկ, նոյնպէս չի փորձեցին լքել բոյնը, տեսնելով Աստղիկին շնորհալի վերաբերումը, առատաձեռն նուէրները և անհուն հոգածութիւնը իրենց վերաւորին հանդէպ:

Երկու շաբաթ վերջ, եկքանիկին վէրքին սպիները թափած էին և վէրքը բուժուած

էր... թը՛ռ... անիկա թուաւ, երբ թեւ քակեց Աստղիկ և շրջան մը ընկելով անոր շուրջը, եկաւ նստաւ ուսին վրայ: Մայր և քոյր եկքանիկներու ուրախութեան և խոյտանքի երգերը կը թնդացնէին ժայռերը, երբ Աստղիկ, Չապէլ և իրենց մայրը ըլլալին ստորտը մօտեցած կը դիտէին և կ'ըմբոշխնէին երջանկութեան այս զեղումը բնութեան ծոցին, Աստուծոյ եւ իր ձեռակերտ լեռներուն մէջ:

Չապէլ ալ այդ օրեր աւելի սուր տխորժակ ունեցաւ ուտելու, տրամադրութիւնն ալ փոխուեցաւ և այտերուն թոյրը պայծառունալու վրայ էր: Պէտք եղաւ բժիշկին խորհուրդ հարցնել, կաթէն և հաւկիթէն զատ ուրիշ կերակուրներ ալ մատակարարելու համար անոր: Չուշացաւ բժիշկը, որ յաջորդ կիրակի իրենց հիւրն էր. քննեց Չապէլը եւ հիւանդութեան ճիւղներէն զրիթէ փրկուած գտաւ և յանձնարարեց հետզհետէ բազմացնել կերակուրին տեսակները:

Կարելի չէր բացատրել այս երգիքին տակ ապրողներու երջանկութիւնը: Տիկին Սաթեհիկ բժիշկին պատմեց Աստղիկի եկքանիկին պատմութիւնը. բարի բժիշկը յուզուեցաւ եւ խնդրեց այցելել այդ ժայռերու բոյնը—այդ տաճարը, ուր ծնկաչոք աղօթք մը մըմնջող Աստղիկ, ուրիշ մազթանք մըն ալ ինք ընդունած էր վերաւոր թռչնիկին քրոջմէն...: Ան մազթած էր որ Աստղիկ ալ երջանիկ ըլլայ և և բարին Աստուած լսած էր անոր աղօթքը: Հոն բոլորը մէկ ծունկի եկած, փառք տալու շնորհաբաշխ Արարչին որ, սէր դրած էր մարդուն սրտին մէջ և գութ բաշխած էր ամէն զի: Օրհնեցին զԱստուած որ, իրենց սրտահատորն ալ բուժած էր, սիրող սիրտերէ բնդխող մազթանքները լսելով:

Օրհնեալ ըլլայ Աստուծոյ կամքը... կրկնեց Տիկին Սաթեհիկ.

Հալեւ

ՌԵՏՈՒՆԻ

ՄԱԿԱՐԱՅԵՑԻ ՅՈՒԴԱՅԻ ՔԱՋ ԵՂԱՅՐՆԵՐԸ

Ասոր վրայ գոհի սեղանը փոխեցին, ճութիթըրի գոհի սեղան ըրին, որուն վրայ խոյ կը մօրթէին, ու խոյին արիւնը սոգին անդին կը սրսկէին տաճարին մէջ: Թաղաւորը սոսոնցմով ալ չբաւականանալով տաճարին բոլոր թանկագին առարկաները կողոպտեց

և մունետիկ կանչել տուաւ թէ Հրեաներէն ամեն ով որ իր նախկին Աստուածը չթողուր և կուռքերուն երկրպագութիւն չընէր, իսկոյն պիտի սպաննուէր:

Այնուհետեւ քուրմերը սկսան ամեն տեղ ուսուցանել Յոյներու կրօնը՝ ու ժողովուրդը խուճի խուճի կը դիմէր այդ քուրմերուն ու կ'ընդունէր նոր կրօնը: Կային փոքր թիւով Հրեաներ ալ՝ որոնք միշտ հաւատարիմ մնացին իրենց Աստուծոյն ու օրէնքին, անոնք ալ ստակալի հալածանքներու ու սարսափելի տանջանքներու ու մահուան կը յանձնուէին:

Երբ քուրմերը աջապէս քաղաքէ քաղաք պտըտելով Յունաց կրօնը կը քարոզէին, անոնք հասան Յոպպէի քովերը Մօտին անունով աւան մը: Քուրմերուն լուր եկաւ թէ այս աւանին մէջ Մատաթիաս անուն ծերունի մը կար, որ բոլոր ժողովուրդին կողմէ մեծ յարգանք կը վայելէր. իր հինգ որդիները Յովհաննան, Սիմոն, Յուզա, Յովնադան, և Նիկադար, ու բոլոր ժողովուրդը անոր կը հետեւէին մեծ պատկառանքով: Ուստի քաղաքը հեթանոս դարձնելու համար պայման էր նախ այդ ծերունին համոզել՝ որպէս զի ասանց արիւնհեղութեան Յունաց կրօնքը ընդունուէր բոլորին կողմէ:

Ուստի կանչեցին զայն և յորդորեցին զինքը որպէս զի թողու իր հին Աստուածը ու կուռքերուն պաշտամունք մատուցանէ, խոստանալով որ եթէ իրենց յորդորին անսայ՝ չտա մը թանկագին նուէրներով պիտի վարձատրուի:

Սակայն ծերունին բարձր ձայնով պա-

տասխան տուաւ եւ ըսաւ. «Եթէ բոլոր աղքեր իրենց հայրերուն կրօնքէն խոտորին, սակայն ես և իմ եղբայրներս մեր հայրերուն Աստուածը պիտի պաշտենք: Մենք թագաւորին պաշտած կուռքերը չը պիտի պաշտենք, և մեր Աստուծոյն ճամբէն աջ կամ ձախ չը պիտի շեղինք:»

Մինչ ծերունին կը խօսէր, կրօնափոխ հրեայ մը եկաւ հեթանոսներուն սեղանին վրայ կուռքերուն գոհ մատուցանելու: Մատաթիասի նախանձը բորբոքեցաւ, և ա'լ չը կրնալով համբերել, քաշեց սուրը, և յարձակեցաւ վատ հրեային վրայ և սպաննեց զայն: Կռիւլ մեծցաւ, իր քաջ որդիքը իրեն միացած յարձակեցան Սելեւկեան զինուորներուն վրայ, զանոնք կոտորեցին, քուրմերը ջարդեցին, ու կուռքերուն սեղանները փլցուցին:

Երբ իրիկուն եղաւ, ծերունի մատաթիաս իր շուրջը հաւաքեց իր որդիներն ու բարեկամները և ամբողջ քաղաքին հրեաները ու ըսաւ անոնց. «Ո՞վ Իսրայէլացիներ, մենք մեր փոքր ոյժովը կարող չենք թագաւորին բանակներուն դիմադրել, սակայն կրնանք պաշտել և պիտի պաշտենք մեր Նհովայ Աստուածը ուստի ան որ իր Աստուծոյն և օրէնքին հաւատարիմ պիտի մնայ թող ետեւէն գայ:» Ասոր վրայ ինքը, իր հինգ որդիները իրենց ընտանիքներն առին, ու իրենց հօտերը միասին առնելով քաղաքէն ելան, և զայցին վայրի լեռներն ու անառիկ քախայրները, հոն՝ ուր ատենօք Դաւիթ իր բնակութիւնը հաստատած էր:

[Շարունակելի]

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԿՐԱԿԱՆ

Եկեղեցապաշտօնի, Դպրապաշտօնի և

Քրիստոսապաշտօնի, Տ. Ճ. ԽՐԴՈՐԵԱՆ

ՅՕՒՈՒԱԾՆԵՐ

Քրիստոս և Դեղատես

Տ. Ճ. Խ.

ՀՈՒՆԻՈՐ ԿԵԱՆՔ

Ճշմարտութիւնը Աստուծոյ

ՎԵՐ. Կ. Յ. Յ.

Բանասիրութեամբ Թագաւորին գտնուիր,

Ս. ՔԻՒՐԵՃԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, Գիտական, Կրթական երկշաբաթաթիւր:

Արտօնատէր, Վ. Կ. Յարութիւնեան Պատասխանատու-Տնօրէն, Տ. Ճ. ԽՐԴՈՐԵԱՆ

ԲԱԺՆԵԳԻՆ

Սուրբոյ համար տարեկան 2 ՄԷԸԻՍ

Արտասահման » » 1 Տուար

Հասցէ—

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287
ALEP SYRIE